ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՍԻԴԻԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1

ք.ԳԱՎԱՌ

11.01. 2023թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը ի դեմս ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղար Ս.Խլղաթյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու) մի կողմից, «Գեղարքունիքի մարզային մարզադպրոց »ՊՈԱԿ – Ը, ի դեմս տնօրեն Ս. Վարդանյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022թ.դեկտեմբերի 29-ի N 2111-Ն որոշմամբ, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում իրականացնել հանրակրթական ուսուցման շրջանակներում արտադպրոցական կրթության ուսուցման պարտավորությունը տարեկան 271 աշակերտի համար՝ այսուհետև՝ ծառայություններ՝ համաձայն կրթական չափորոշիչների:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարված Ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Առանց Ծառայությունների արդյունքի դիմաց վարձատրելու միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կատարողի կողմից կատարված Ծառայությունները չեն համապատասխանում սահմանված պահանջներին և (կամ) խախտել է Ծառայությունների կատարման ժամկետը և Ծառայությունները չեն կարող կատարվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում:

2.1.3 Չընդունել Ծառայությունների արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին և սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անվճար վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.4 Մինչև Ծառայությունների արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով ,Կատարողին և հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Ծառայությունների արդյունքը, իսկ Ծառայությունների արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Մինչև Ծառայությունների արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը, Պատվիրատուի կողմից ցանկացած ժամանակ սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու կատարված Ծառայությունների համարժեք գինը, բացառությամբ սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված դեպքի:

2.3.2 Մինչև Ծառայությունների արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով Պատվիրատուին:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Ապահովել Ծառայությունների կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրի **2.1.2** կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները:

2.4.3 Սույն պայմանագրի **2.1.3** կետով նախատեսված դեպքում Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անվճար ապահովել թերությունների վերացումը և Պատվիրատուին վճարել սույն պայմանագրի **5.2** կետով նախատեսված տուգանքը:

2.4.4 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարողը մինչև **2023**թ. նոյեմբեր ամիսը ներառյալ մատուցված Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունը Պատվիրատուին ներկայացնում է մինչև 2023թ. դեկտեմբերի 15-ը, երկու օրինակից:

3.2 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունները չընդունելու պատճառաբանված մերժումը ;

3.3 Կատարողի կատարած Ծառայությունների արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցած ծառայությունների գինը կազմում է 13565,0 հազ ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, այդ թվում հարկերը և այլ պարտադիր վճարները:

4.2 Պատվիրատուն սույն պայմանագրի 4.1 կետում նշված գումարը Կատարողին վճարում է հետևյալ կարգով՝

ա/ Մատուցված ծառայությունների դիմաց վճարումները կատարվում են միանվագ կարգով, ամսական կտրվածքով, մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 5-րդ աշխատանքային օրը, որպես կանխավճար, որը մարվում է մինչև 2023 թվականի դեկտեմբերի 15-ը: Ընդ որում յուրաքանչյուր ամիս վճարվող գումարի չափը ներկայացված է սույն պայմանագրի N 1 հավելվածում:

բ/ 2023 թվականի դեկտեմբեր ամսին մատուցված ծառայությունների դիմաց գումարները վճարվում են երկկողմ հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա, մինչև 2023 թվականի դեկտեմբերի 27-ը:

4.3 Մատուցվելիք ծառայությունների դիմաց կանխավճարի ձևով կատարված վճարումների և փաստացի մատուցված՝ հանձնման-ընդունման արձանագրությամբ սահմանված, ծառայությունների մատուցման արդյունքների միջև դրական տարբերության դեպքում Պատվիրատուն գումարները հաշվանցում է 2023 թ. դեկտեմբերին մատուցվելիք ծառայությունների դիմաց վճարվող գումարներից: Եթե հաշվանցվելիք գումարի չափը գերազանցում է 2023 թ. դեկտեմբերի վճարվելիք գումարը, ապա Կատարողը պարտավորվում է հանձնման-ընդունման արձանագրությունը երկկողմ հաստատվելու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում գումարները հետ փոխանցել Պատվիրատուին: Բացասական տարբերության դեպքում Պատվիրատուն պարտավորվում է 10 աշխատանքային օրվա ընթացքում գումարները վճարել Կատարողին:

4.4 Պատվիրատուն գումարները վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայությունների որակի և սահմանված պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման և 2.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Ծառայությունները չընդունվելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5%-ի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայությունների կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝

կատարման ենթակա, սակայն չկատարված Ծառայությունների արժեքի 0,05%-ի չափով: Սույն պայմանագրի 4.3 կետով նախատեսված դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուժացված օրվա համար գանձվում է տույժ Պատվիրատուին հետ վերադարձման ենթակա գումարի 0,05 տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություններ կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից, կամ հանձվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 և 4.3 կետերով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տուգանքի և տույժի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

5.8 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև սույն պայմանագրի կնքումը Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա, այդ հիմքերը ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային սույն պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել Պատվիրատուի կրած վնասները, այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների ծառայությունի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1 Սույն պայմանագրի պայմանները տարածվում են կողմերի միջև 2023 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա և գործում են մինչև 2023 թվականի դեկտեմբերի 30-ը: Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմնագրի անբաժանելի մասը:

7.3 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.4 Սույն պայմանագիրը կազմված է 3 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1 հավելվածը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ ա տ վ ի ր ա տ ու	Կ ա տ ա ր ո ղ
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան ք. Գավառ	,,Գեղարքունիքի մարզային մարզադպրոց ″ ՊՈԱԿ
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն հ/հ 900171078604 ՀՎՀ 08404767	ՀՎՀՀ 08407421
Մարզպետարանի գլխավոր քարտուղար՝ Ս.Խլղաթյան	Գանձապետական հ/հ 900178000247
Ստորագրություն	Մարզադպրոցի տնօրեն Ս. Վարդանյան Ստորագրություն

Հավելված N1
11.01.2023 թ. կնքված N 1 պայմանագրի

<<Գեղարքունիքի մարզային մարզադպրոց>> ՊՈԱԿ-ին 2023թ. տրամադրվելիք
գումարներն ըստ ամսական բացվածքի
Արտադպրոցական կրթություն

N	Ամիսը	Գումարը(հազար դրամ)՝աճողական
1	Հունվար	-
2	Փետրվար	1356,5
3	Մարտ	2713,0
4	Ապրիլ	3843,4
5	Մայիս	4973,9
6	Հունիս	6104,3
7	Հուլիս	7234,7
8	Օգոստոս	8365,1
9	Սեպտեմբեր	9495,5
10	Հոկտեմբեր	10852,0
11	Նոյեմբեր	12208,5
12	Դեկտեմբեր	13565,0

Պ ա տ վ ի ր ա տ ու

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան
ՀՀ ՖՆ.գործառն.վարչություն
ՀՀ 900171078604
Գլխավոր քարտուղար
Ա.Հելոյթյան

Կ ա տ ա ր ո ղ

, Գեղարքունիքի մարզային մարզադպրոց" ՊՈԱԿ
ՀՎՀՀ 08407421

Գանձապետական հ/հ 900178000247
Մարզադպրոցի տնօրեն՝
Վ.Վարդանյան

Հավելված N 1
ՀՀ ֆինանսների
18-ի
N 346-Ն հրամանի

Կատարող
<< Գեղարքունիքի
մարզային մարզադպրոց>> ՊՈԱԿ
Գյուղ Սարուխան
հհ 900178000247
ՀՀ ֆինանսների նախ.գործառ. Վարչություն
հվհհ ___08407421

Պատվիրատու
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան
_____
Ք.Գավառ Կենտրոնական հրապարակ
հհ 900171078539_____
Կենտրոնական գանձապետարան
հվհհ____08404767

ԱԿՏ N 1
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ
03 հունվարի 2023 թ.

Պայմանագրի անվանումը՝ _____*Սուբսիդիայի հատկացման պայմանագիր*
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ 17___01__ 2022թ.
Պայմանագրի համարը՝ _____1_____
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան (այսուհետ՝ Պատվիրատու)՝
սուբսիդիա տրամադրող ՀՀ պետական կառավարման մարմինը

ի դեմս ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կրթության և մշակույթի ստորաբաժանման ղեկավար Համբարձում Սաֆարյանի ու <<ՀՀ Գեղարքունիքի մարզային մարզադպրոց >> ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Կատարող)՝
սուբսիդիա ստացող իրավաբանական անձը

ի դեմս __ տնօրեն Սնակ Վարդանյանի
կազմեցին սույն ակտը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը 01.01.2022 թ.
30.12. 2022 թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները.

Համառոտ նկարագիրը	Քանակը	Նվազագույն շահավետ գինը՝ մեկ միավորի հաշվարկով (հազ. դրամ)	Մեկ միավորի գինը (հազ.դրամ)	Մեկ միավորի համար տրամադրվող սուբսիդիայի չափը (հազ.դրամ)	Վճարման ենթակա գումարը (հազ.դրամ)	Վճարման վերջնաժամկետը՝ ամիս, ամսաթիվը
1	*2*	*3*	*4*	*5=3-4*	*6=2x5*	*7*
Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին	1	13565.0	0.0	13565.0	13565.0	հունվար-դեկտեմբեր
Ընդամենը		13565.0		13565.0	13565.0	

Աշխատանքը հանձնեց՝
_____
ստորագրություն
Գարդանյան Ս.
ազգանուն, անուն
Կ.Տ.

Աշխատանքը հանձնեց՝ կրթության և մշակույթի տարածաշրջանային
ստորաբաժանման ղեկավար
_____
ստորագրություն
Սաֆարյան Հ.
ազգանուն, անուն
Կ.Տ.